

***«Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» վիճակագրական վերլուծական
գեկույցի շրջանակներում ներկայացվեցին 2008թ. տնային տնտեսությունների կենսամակարդակի
ամբողջացված հետազոտության հիմնական արդյունքները***

2007թ. հունվարի 1-ից սկսած ՀՄՀ-Հայաստանը համաֆինանսավորում է տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտությունը (SSԿԱՀ)՝ նպատակ ունենալով վերջինիս տվյալներն օգտագործել ծրագրի ազդեցությունը գյուղական աղքատության կրճատման վրա գնահատելու համար: Ս.թ. հոկտեմբերի 28-ին Թեքեյան կենտրոնում տեղի ունեցավ «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» վիճակագրական վերլուծական գեկույցի 2008թ.-ի արդյունքների ներկայացումը: Սույն գեկույցը թվով տասներորդն է ՀՀ ԱՎԾ կողմից ամենամյա պարբերականությամբ հրապարակվող համանուն գեկույցների շարքում: Նշյալ գեկույցների հիմնական նպատակն է տրամադրել տեղեկատվություն երկրում աղքատության մակարդակի և սոցիալական վիճակի վերաբերյալ: Այս տարվա գեկույցում տեղ են գտել ՀՄԿ և ՀՄՀ-Հայաստանի խորհրդատուներ ֆրեդերիկ Շուրենի և Ալի Մուստափի կողմից մշակված տվյալների համահարթեցման մեթոդաբանությունը, ինչպես նաև ՀՄՀ-Հայաստանի խորհրդատու ԱՎԱԳ Սոլյուսնս ընկերության կողմից Գյուղատնտեսական տվյալների գնահատում առաջադրանքի շրջանակներում իրականացված SSԿԱՀ 2004 և 2007թ. համամետական վերլուծության որոշ արդյունքներ:

Ներկայացմանը ողջույնի խոսքով հանդես եկան ՀՀ ազգային վիճակագրական ծառայության նախագահ Ստեփան Մնացականյանը, ՀՄԿ Հայաստանի ծրագրի փոխտնօրեն Մայրոն Հիրնյակը, ՀՄՀ-Հայաստանի ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանը, Համաշխարհային բանկի Երևանյան գրասենյակի տնօրեն Արիստոմեն Վարուդակիսը և Համաշխարհային բանկի ավագ տնտեսագետ Լիրե Էրսադոն:

«Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը 2009» գեկույցում ներկայացված տվյալների համաձայն՝ նվազել է թե աղքատության մակարդակը, թե աղքատության սրությունը: Այդուհանդերձ, աղքատությունը դեռ շարունակում է խնդիր լինել Հայաստանի համար, քանզի բնակչության 23.5% (ավելի քան 760 հազար մշտական բնակիչ) աղքատ է, իսկ նրանցից մոտավորապես 100 հազարը՝ ծայրահեղ աղքատ:

***«Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» գեկույցը հասանելի է ՀՀ ազգային
վիճակագրական ծառայության ինտերնետային կայքում՝ <http://www.armstat.am/arm>***